

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում էմ  
Տնօրեն Դ. Կոստանյան  
« 15 » 05 2023թ.



ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ Մայրենի, Օտար լեզու, Ինֆորմատիկա  
ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ Խոսքի զարգացում

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ Թագուհի Գրիգորյան, Սերգեյ Ավանեսյան, Անուշ Մարգիսյանյան,  
Մարգարիտա Պետրոսյան, Լուսինե Բաղդասարյան

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 15.05.2023թ. նիստում: Արձանագրություն թիվ 5 :

Քննարկվել, հավանության է արժանացել Քննարկարարական մասնակցության և քննարկության Ծրագրի լեզու Ենիքի  
համալիրը 10.05.2023թ. 12.05.2023թ.  
մեթոդախաղարկման 11.05.2023թ. նիստում: Արձանագրություն թիվ 10 :

Մեթոդախաղարկման նախագահ	<u>Պատկ</u> (ստորագրություն)	<u>Պետրոսյան Ս.</u> (ազգանուն, անուն)
Մեթոդախաղարկման նախագահ	<u>Միսակ</u> (ստորագրություն)	<u>Դանիելյան Ս.</u> (ազգանուն, անուն)
Մեթոդախաղարկման նախագահ	<u>Պատկ</u> (ստորագրություն)	<u>Դաջունց Ա.</u> (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Պատկ Ավանեսյան Ս.  
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մաս. կրթ. աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ Պատկ Գևորգյան Ս.  
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2023թ.

**ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ»**

**ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝**

ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 5-9-ԸԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

**ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

**Շաբաթական 1 դասաժամ**

**Ընդհանուր տևողությունը՝ 34 դասաժամ, որից՝ 10.5 դասաժամ տեսական**

**23.5 դասաժամ գործնական**

**ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ՝**

«Խոսքի զարգացում» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը՝ գրավոր և բանավոր խոսքի համապատասխան ոճերով կառուցումից, ինչը թույլ կտա ճշտորեն կիրառել մայրենի լեզվի քերականական կանոնները, ՏՀՏ գործիքների կիրառումից, ուսումնական կոնկրետ առաջադրանքներ կատարելուց, բանավեճեր, քննարկումներ անցկացնելուց, պաշտոնական գրություններ խմբագրելուց, հետազոտություններն ու եզրակացությունները տրամաբանորեն ներկայացնելուց, թարգմանություններ կատարելուց, ինչը կնպաստի նաև «Օտար լեզուներ», «Ինֆորմատիկա», «Մայրենի» առարկաների դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով) (ՀՊԶ Հ-1), հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով) (ՀՊԶ Հ-2), առնվազն երկու օտար լեզուներով (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում՝ առնվազն մեկ) հասկանա ծանոթ, պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը, լեզվակիր երկրներում կարողանա կողմնորոշվել և հաղորդակցվել հաղորդակցական պարզ իրավիճակներում (ՀՊԶ Հ-3), որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք (ՀՊԶ Հ-7), կիրառի տեքստային և գրաֆիկական խմբագրիչները, այդ թվում՝ աշակցող տեխնոլոգիաներ, կարողանա մշակել տվյալներ՝ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր (ՀՊԶ Հ-12), տիրապետի թվային տարածքում ապահով գտնվելու կանոններին, պահպանի օնլայն հաղորդակցության էթիկան, տեղյակ լինի անձնական տվյալների գաղտնիության կանոններին և կիրառի դրանք, մեկնաբանի յուրաքանչյուր անձի անձնական տարածք (ֆիզիկական և հոգեբանական) ունենալու իրավունքն ու անհրաժեշտությունը (ՀՊԶ Հ-13), դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր (ՀՊԶ Հ-28), ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ (ՀՊԶ Հ-29), գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ (ՀՊԶ Հ-30), արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը (ՀՊԶ Հ-31), կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, հակումները, ընդունել սեփական յուրահատկությունները (ՀՊԶ Հ-36):

**ԽՄԲԱԿԻ ՆՊՍՏԱԿԸ՝**

«Խոսքի զարգացում» խմբակի ծրագիրը մշակվել է աշակերտների խոսքի զարգացման, նրանց ստեղծագործական ունակությունների բացահայտման և զարգացման, աշակերտների կողմից այդ

ունակությունները զարգացնող մեթոդների և հնարքների յուրացման, աշակերտների լեզվազգացողության և լեզվամտածողության կատարելագործման, հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակներով:

### **ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

1. Համապատասխան ոճով կառուցել գրավոր և բանավոր խոսքը՝ ճշտորեն կիրառելով մայրենի լեզվի քերականական կանոնները:
2. Կարողանալ S2S կիրառմամբ խմբագրել իր և ընկերների խոսքը:
3. Կարողանալ գրավոր և բանավոր փոխադրել ցանկացած տեքստ՝ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով:
4. Կարողանալ անց կացնել բանավեճեր, քննարկումներ և խմբագրել պաշտոնական գրություններ:
5. Տրամաբանորեն ներկայացնել իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները:
6. Կարողանալ թարգմանություններ կատարել:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1. Համապատասխան ոճով կառուցել գրավոր և բանավոր խոսքը՝ ճշտորեն կիրառելով մայրենի լեզվի քերականական կանոնները:**

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. կարողանում է խոսքը կառուցել լսարանին, խնդրին (թեմային), առարկային, իրավիճակին համապատասխան
2. կարողանում է խոսքը հակիրճ կառուցել՝ առանց ավելորդաբանությունների
3. ծանոթ է իր տարիքակիցներին ուղղված գրավոր և բանավոր խոսքի լեզվական առանձնահատկություններին, պատմություններ, հեքիաթներ է հորինում և տարբեր միջոցներով ներկայացնում դրանք,
4. կարողանում է որևէ իրական դեպքի մասին մանրամասն և հակիրճ պատմել, օրագիր է գրում՝ նկարագրելով օրը, օրվա առանձին դեպքերը, տպավորությունները, տրամադրությունները, կատարած աշխատանքները,
5. կարող է վերլուծական հոդվածներ գրել իր կարդացած կամ իրեն առաջարկած նյութի վերաբերյալ՝ փաստարկված և համոզիչ շարադրելով իր դիտարկումները, կարծիքը, եզրակացություններ:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում աշակերտին կտրվեն գործնական աշխատանքներ՝

- ստեղծագործական՝ հեքիաթներ, տարբեր թեմաներով պատմություններ հորինել
- նկարագրական՝ նկարագրել տարբեր երևույթներ՝ բնական և հասարակական, միջավայր և այլն
- վերլուծական՝ գրավոր պատմել առանձին դեպքերի, երևույթների, կարդացած նյութի, հեռուստատեսային հաղորդման մասին՝ ընդարձակ և հակիրճ, վերլուծել դրանք, կարծիքներ հայտնել:

Արդյունքը կհամարվի դրական, եթե աշակերտը կատարած լինի բոլոր առաջադրանքների 80%-ը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Դասավանդման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, տարբեր նյութեր լրագրերից և այլ աղբյուրներից, մանկական գրականություն:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական՝ 2 դասաժամ

Գործնական՝ 5 դասաժամ

<b>Արդյունք 1.</b>		<b>ԸՆԴՀ.</b>	<b>ՏԵՍ.</b>	<b>ԳՈՐԾ.</b>
1.1	Մայրենի լեզվի դերը խոսքի զարգացման գործում: Գեղարվեստախոսքային դաստիարակության խնդիրները	1	1	
1.2	Երեխաների խոսքի զարգացումը	1	1	
1.3	Հորինել հեքիաթ կամ հետաքրքիր պատմություն	1		1
1.4	Կազմել կարճ պատմություն ընտանի կենդանիների մասին	1		1
1.5	Հակիրճ կառուցել որևէ ստեղծագործություն առանց ավելորդաբանության	1		1
1.6	Գրավոր վերլուծել հեռուստատեսային որևէ հաղորդման բովանդակություն	1		1
1.7	Նկարագրել օրվա առանձին դեպքեր, համոզիչ կերպով շարադրել կարծիքը հրատապ որևէ թեմայի շուրջ	1		1
<b>Ընդամենը</b>		<b>7</b>	<b>2</b>	<b>5</b>

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ ՏՀՏ կիրառմամբ խմբագրել իր և ընկերների խոսքը  
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝**

1. կարողանում է տարբերել լեզվական ճիշտ և սխալ կառույցները, գիտի առավել տարածված լեզվական սխալների ճիշտ տարբերակները
2. կարողանում է տեղին գործածել մայրենի լեզվի բառապաշարի տարբեր շերտերը (գրական-խոսակցական-բարբառային, ընդհանուր և սահմանափակ գործածության, մասնագիտական), դարձվածքները, առած-ասացվածքները, թևավոր խոսքերը և լեզվական այլ կառույցները
3. կարողանում է աշխատել բառարաններով
4. կարողանում է տեքստ խմբագրել՝ հանելով տեքստը ծանրացնող, տեքստին ոչինչ չտվող լեզվական ավելորդ միավորները կամ դրանք փոխարինելով համարժեք միավորներով:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում աշակերտին կտրվեն գործնական առաջադրանքներ՝ տրված տեքստերում ուղղել լեզվական սխալ կառույցները, տարեր բնույթի տեքստեր թարգմանել, տեքստ գրել տրված լեզվական կառույցներով (դարձվածքներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր և այլն):

Արդյունքը կհամարվի դրական, եթե աշակերտը կատարի տրված առաջադրանքների 80%-ը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Դասավանդման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, բառարաններ, համակարգիչներ, համացանցից օգտվելու հնարավորություն:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական՝ 2 դասաժամ

Գործնական՝ 3 դասաժամ

<b>Արդյունք 2</b>		<b>ԸՆԴՀ.</b>	<b>ՏԵՍ.</b>	<b>ԳՈՐԾ.</b>
2.1	Լեզվի և խոսքի նշանակությունը, բառապաշարի տարբեր շերտերի փոխկապակցումը	1	1	
2.2	ՏՀՏ դերը խոսքի զարգացման գործում	1	1	
2.3	Տրված տեքստում գտնել սխալ կառույցները և փոխարինել դրանք համարժեքներով: Կազմել տեքստ՝ օգտագործելով տրված դարձվածքները	1		1
2.4	Համացանցից գտնել բառապաշարի տարբեր շերտեր պարունակող տեքստեր: Խմբագրել տեքստը՝ հանելով լեզվական ավելորդ միավորները	1		1
2.5	Համացանցից գտնել տարբեր ժողովուրդների առածներ և	1		1

ասացվածքներ			
	<i>Ընդամենը</i>	<i>5</i>	<i>2</i>
		<i>3</i>	

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ գրավոր և բանավոր փոխադրել ցանկացած տեքստ՝ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝**

- կարողանում է վերապատմել ցանկացած տեքստ՝ պահպանելով դրա լեզվական կառույցը և այլ առանձնահատկություններ
- կարողանում է պահպանել տեքստի իմաստային, կառուցվածքային և ոճական ամբողջականությունը
- կարողանում է տեքստը գրավոր և բանավոր փոխադրել որոշակի առաջադրանքներով՝ առանց մեկնաբանությունների, սեփական մեկնաբանություններով կամ վերլուծություններով, իր անունից, հեղինակի անունից, հերոսներից մեկի կամ նրա անունից, ում վերաբերում է տեքստը, տեքստի բովանդակությունից էլնելով՝ տեքստը վերապատմում է, դրականորեն տրամադրված անձի անունից, չեզոք անձի անունից, բացասականորեն տրամադրված անձի անունից
- կարողանում է տարբեր տեքստեր վերաշարադրել իր տարիքին, ընկալումներին, մտածողությանը համապատասխան լեզվով
- տարբեր ուսուցողական նպատակներով ընդարձակում կամ համառոտում է ցանկացած տեքստ

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում աշակերտին կտրվեն գործնական աշխատանքներ՝ տարբեր առաջադրանքներով (հերոսի անունից, իր անունից, դրական վերաբերմունքով, բացասական մեկնաբանությամբ, տարբեր պատճառաբանություններով, եզրակացություններ կատարելով, տարբեր մոտեցումներով) փոխադրել տրված տեքստերը:

Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կատարի բոլոր առաջադրանքների առնվազն 70%-ը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Դասավանդման համար անհրաժեշտ են մանկական ստեղծագործություններ, տարբեր բնույթի, բովանդակության տեքստեր:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական՝ 1.5 դասաժամ

Գործնական՝ 3.5 դասաժամ

<i>Արդյունք 3</i>		<i>ԸՆԴՀ.</i>	<i>ՏԵՍ.</i>	<i>ԳՈՐԾ.</i>
3.1	Երեխաների խոսքի զարգացման առանձնահատկությունները, մանկական գեղարվեստական գրականությունը	1	1	
3.2	Պատմելու ուսուցում: Վերապատմել առաջադրված տեքստը՝ պահպանելով դրա լեզվական կառույցը	1	0.5	0.5
3.3	Վերաշարադրել տեքստը՝ հերոսներից մեկի անունից	1		1
3.4	Վերապատմել տրված տեքստը՝ մանկան տարիքին ու ընկալումներին համապատասխան	1		1
3.5	Առաջադրված տեքստը ընդարձակել և համառոտել: Փոխադրել տրված տեքստը՝ մեկնաբանություններ կատարելով	1		1
<i>Ընդամենը</i>		<i>5</i>	<i>1.5</i>	<i>3.5</i>

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ անց կացնել բանավեճեր, քննարկումներ և խմբագրել պաշտոնական գրություններ:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝**

1. կարողանում է տարբեր թեմաներով (քննարկմանը, բանավեճին, հանդիպմանը համապատասխան) նյութեր պատրաստել, տարբեր բնագավառներին վերաբերող տեղեկատվական նյութեր հավաքել, դրանք դասակարգել, մշակել
2. տիրապետում է բանավոր հավաքներ վարելու կուլտուրային (լսել, հարգել ուրիշի կարծիքը, հետևել իր և մյուսների մտքի ընթացքին, հաշվի առնել և մշակել դիմացինի փաստարկները)
3. կարողանում է կիրթ, լսելի խոսք կառուցել և ներկայացնել, տիրապետում է խոսքի հնչերանգին,
4. կարողանում է պաշտոնական և այլ նամակներ, գրություններ, հաշվետվություններ գրել
5. ճիշտ է գործածում տարբեր մասնագիտությունների մասնագիտական տերմինները, ձևակերպումները, լեզվական կառույցները

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում աշակերտին կհանձնարարվի որևէ հրատապ (ակտուալ) թեմայի վերաբերյալ քննարկում կազմակերպել, նախապես տեղեկատվական նյութեր հավաքել, քննարկմանը համապատասխան մշակել այդ նյութերը, հաշվետվություն գրել կայացած քննարկման մասին: Կհանձնարարվի տարբեր իրավիճակների համար համապատասխան գործնական գրություններ գրել:

Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կատարի բոլոր առաջադրանքները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Անհրաժեշտ են համապատասխան մանկական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, համակարգչային տեխնիկա:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական՝ 1 դասաժամ

Գործնական՝ 5 դասաժամ

<i>Արդյունք 4</i>		<i>ԸՆԴՀ.</i>	<i>ՏԵՍ.</i>	<i>ԳՈՐԾ.</i>
4.1	Խոսքային հաղորդակցություն: Բանավեճի անցկացման մեթոդիկա: Կապակցված բանավոր խոսքի զարգացում	1	1	
4.2	Կազմակերպել քննարկում և բանավեճ առաջադրված թեմայով	1		1
4.3	Գրել հաշվետվություն անցկացված բանավեճի վերաբերյալ և տրված թեմայով	1		1
4.4	Ընտրել հրատապ որևէ թեմա և կազմակերպել քննարկում	1		1
4.5	Տեղեկատվական նյութերի հավաքում տրված թեմայով	1		1
4.6	Գրել նամակ, դիմում, տեղեկանք, լիազորագիր, արձանագրություն	1		1
<i>Ընդամենը</i>		<i>6</i>	<i>1</i>	<i>5</i>

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Տրամաբանորեն ներկայացնել իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝**

1. կարողանում է ցանկացած նյութ ներկայացնելիս խոսքը կառուցել իր ասելիքի տրամաբանությունը հաշվի առնելով
2. կարողանում է իր դատողությունները ներկայացնել փաստարկներով և պատճառաբանություններով՝ խուսափելով ավելորդաբանություններից

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում աշակերտին կհանձնարարվի որևէ հրատապ (ակտուալ) թեմայի վերաբերյալ քննարկում կազմակերպել, նախապես տեղեկատվական նյութեր հավաքել, քննարկմանը համապատասխան մշակել այդ նյութերը, հաշվետվություն գրել կայացած քննարկման մասին: Կհանձնարարվի տարբեր իրավիճակների համար համապատասխան գործնական գրություններ, հաշվետվություններ գրել:

Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կատարի բոլոր առաջադրանքների առնվազն 70%-ը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ՝**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Անհրաժեշտ են համապատասխան մանկական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, համակարգչային տեխնիկա:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական՝ 1.5 դասաժամ  
 Գործնական՝ 3.5 դասաժամ

<i>Արդյունք 5</i>		<i>ԸՆԴՀ.</i>	<i>ՏԵՍ.</i>	<i>ԳՈՐԾ.</i>
5.1	Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակության և զարգացման անհրաժեշտ պայմաններն ու միջոցները: Խոսակցական լեզվի ձևավորումը	1	1	
5.2	Մենախոսություն և երկխոսություն, կարճ ելույթներ	1	0.5	0.5
5.3	Տեղեկատվական նյութերի հավաքում կենդանիների վարքի մասին	1		1
5.4	Տեքստից դուրս գրել համապատասխան բառաշարքեր և դրանք օգտագործել բանավոր խոսքում	1		1
5.5	Գրել ինքնակենսագրություն	1		1
<i>Ընդամենը</i>		<i>5</i>	<i>1.5</i>	<i>3.5</i>

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կարողանալ թարգմանություններ կատարել:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝**

- կարողանում է թարգմանել տարբեր ոճերի և ժանրերի տեքստեր
- կարողանում է գտնել լեզվական կաղապարների համարժեքները իրենց ծանոթ լեզուներում
- կարողանում է պահպանել թարգմանվող գործի ռիթմիկ և լեզվական առանձնահատկությունները
- կարողանում է օգտվել տարբեր բառարաններից

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում աշակերտի նախընտրած օտար լեզվով տրվում է 3 բնույթի գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական տեքստ (1-2 համակարգչային էջ), որը նա թարգմանում և ներկայացնում է ուսուցչին:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կատարում է բոլոր առաջադրանքները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ՝**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Դասավանդման համար անհրաժեշտ են տարբեր բնույթի տեքստեր և համակարգիչ:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝**

Տեսական՝ 2.5 դասաժամ  
 Գործնական՝ 3.5 դասաժամ

<i>Արդյունք 6</i>		<i>ԸՆԴՀ.</i>	<i>ՏԵՍ.</i>	<i>ԳՈՐԾ.</i>
6.1	Բառապաշարի ակտիվացման մեթոդները	1	1	
6.2	Խոսքի քերականական կողմի ձևավորումը	1	1	
6.3	Թարգմանչական գործի առանձնահատկությունները, բառարաններից օգտվելու ձևերը	1	0.5	0.5
6.4	Համեմատել որևէ հեքիաթի թարգմանություն բնագրի հետ և մեկնաբանել	1		1
6.5	Թարգմանել որևէ ոտանավոր՝ պահպանելով ռիթմիկան	1		1
6.6	Ընտրել և թարգմանել որևէ գիտական, գեղարվեստական,	1		1

հրապարակախոսական տեքստ			
	<i>Ընդամենը</i>	<i>6</i>	<i>2.5</i>
			<i>3.5</i>

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Խոսքի զարգացում: Տեսություն և պրակտիկա, Ջուլիետա Գյուլամիրյան, 2013
- Դյուի Ջ., Դպրոցը և հասարակությունը, «Դպիր» մանկավարժական հանդես, Երևան, 2008, 88 էջ:
- Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Ե., 1986, էջ 288:
- Ղույումյան Գ. Ե., Մանկավարժություն, գիրք II, Ե., 2017, էջ 232:
- Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Ե. 1995, 224 էջ:
- Ժան Պիաժե, Երեխայի խոսք և մտածողություն, Մ., 1994:
- Ջ. Ֆլեյվելլ, Ժան Պիաժեի գենետիկական հոգեբանություն, Մ., 1967:
- Ժան Պիաժե, [intelligence.su/lib/000463.htm Теория Пиаже. Разд. III: Теория стадий] // 20-րդ դարի 30-60-ականների Արտասահմանյան հոգեբանության պատմություն, Տեքստեր / Խմբ.՝ Պ.Յա.Գալպերինա, Ա.Ն.Ժդան, Մ.: Հրատարակչություն՝ Մոսկվայի համալսարան, 1992, էջ. 232-292:
- Ժան Պիաժե, «Երեխայի խոսքը և մտածողությունը» և «Երեխայի դատողությունը և տրամաբանությունը» գրքերի վերաբերյալ Լ. Ս. Վիգոտսկու քննադատական դիտողությունների մեկնաբանությունները // Ընդհանուր հոգեբանության քրիստոմատիա. Մտածողության հոգեբանություն / Խմբ.՝ Յու. Բ. Գիպպենրեյտեր, Պ.Պ Պետոխովա, Մ., 1981:
- Ս. Ն. Ցեյտլին, Լեզուն և երեխան, Երեխայի խոսքի լեզվաբանություն, Մ., 2000, 240 էջ:
- Գլուխ «Երեխայի խոսքի առաջացումը և զարգացման առաջին փուլերը» (Ս. Լ. Ռուբինշտեյն, Ընդհանուր հոգեբանության հիմունքներ. Սանկտ Պետերբուրգ, 1998):
- Խոսքի զարգացման համար շուտասելուկներ և ոչ միայն Archived 2019-01-26 at the Wayback Machine.:
- Երեխայի խոսքի զարգացման փուլեր Archived 2007-10-22 at the Wayback Machine. — հոդված ծնողների համար:
- Մանկական խոսքի զարգացման փուլեր
- Կապակցված խոսքի զարգացման համար սովորական խաղեր
- Լոգոպեդական տեսահոլովակ-դասեր երեխաների խոսքի զարգացման համար